Եղեգիս համայնքում իրականացված զարգացման ծրագրերին կանանց և տղամարդկանց հավասար օգտվելու հնարավորությունները

Լուսինե Գրիգորյան

Անոտացիա

Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարության անքակտելի հիմքերից է, իսկ ժողովրդավարության դրսևորումներից մեկը հանրության կարծիքը և կամքը հաշվի առնելն է: Սույն հոդվածում քննարկվում է համայնքի զարգացման և առաջխաղացման հարցում կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կազմման գործընթացը և դրա մեջ ներառված հարցերում համայնքի բնակիչների կարծիքը, որը գործնական մակարդակի վրա է դնում ռազմավարական ծրագրի տեսլականը, նպատակներն ու խնդիրները:

Հետազոտությունն անցկացվել է Վայոց ձորի մարզի Եղեգիս բազմաբնակավայր համայնքում: Որպես կանոն, ծրագրերի մշակումը պետք է ընթանա մի քանի փուլով՝ ներառելով ուղիղ և անուղղակի ժողովրդավարական մեթոդներ, մասնավորապես՝ նախքան ծրագիր մշակելը պետք է ստեղծվեն աշխատանքային խմբեր՝ ներառելով ոչ միայն ավագանու անդամներին կամ համայնքապետարանի աշխատողներին, այլև համայնքի բնակչության շահագրգիռ կողմերին. ծրագրերի նախնական տարբերակները հանրային լսումների միջոցով պետք է ներկայացվեն համայնքի բնակչությանը և քննարկումներ ծավալվեն այն ավելի ներկայացուցչական դարձնելու համար:

Հետազոտությունն արդիական է այնքանով, որ այժմ անցնող օրվա հետ փոխվում են մարդկանց պահանջմունքներն ու ցանկությունները, իսկ հնգամյա զարգացման ծրագրերում անհրաժեշտ է և պետք է ներառվեն այնպիսի խնդիրներ, որոնք կմեկտեղվեն համայնքի բնակիչ-ղեկավար-ավագանի օղակի շրջանակներում: Այս համատեքստում կան շատ բացթողումներ, որոնք բնակիչների շրջանում առաջացնում են դժգոհություններ, անտարբերություն: Միևնույն ժամանակ բնակիչները չեն մասնակցում հանրային քննարկումներին, չեն արտահայտում իրենց կարծիքն ու տեսակետը: Այս բոլոր հարցերն այս հոդվածի առանցքն են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա 2
Ներածություն 4
Մեթոդաբանություն 6
Տվյալների վերլուծություն 7
Ամփոփում. վերհանված խնդիրներ 13
Առաջարկություններ 14
Աբստրակտ 16
Abstract 17

Ներածություն

Յուրաքանչյուր համայնքի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է լինում մշակել ծրագիր, որը հստակ կարտացոլի տվյալ համայնքի զարգացման տեսլականը, կսահմանի նպատակներ և իրատեսական խնդիրներ՝ առանձնացնելով գործնական քայլեր դրանց հասնելու համար: ՀՀ համայնքներում կառավարման արդյունավետության ապահովման համար հինգ տարի պարբերականությամբ կազմվում են համայնքի զարգացման ծրագրեր (այսուհետ՝ ՀԶԾ): Համաձայն ՀՀ ՏԻՄ մասին օրենքի Հոդված 82-ի՝ «Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը»[1]:

ՀԶԾ-ն հանդիսանում է համայնքի ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը և միջնաժամկետ պլանավորման ձև է, որը գործնական մակարդակի վրա է դնում ռազմավարական ծրագրի տեսլականը, նպատակներն ու խնդիրները:

Համայնքի զարգացման ծրագիրը հանդիսանում է համայնքի ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը և միջնաժամկետ պլանավորման ձևերից մեկն է: Համաձայն վերոնշյալ օրենքի՝ համայնքի զարգացման ծրագիրը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից (իր լիազորությունների ստանձնման օրից չորս ամսվա ընթացքում) և հանձնվում է համայնքի ավագանուն՝ հաստատման համար: Վերջիններս քննարկում են այն, կատարում անհրաժեշտ փոփոխություններ և ընդունում նիստի ժամանակ (անդամների ձայների կեսից ավելիով)[2]: Այս ծրագիրն էլ, իր հերթին, պետք է համահունչ լինի ՀՀ Ազգային ժողովի և Կառավարության մարզային, տարածաշրջանային զարգացման և ռազմավարական ծրագրերին:

Համաձայն տարբեր ուղեցույցների (այդ թվում նաև ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված «մեթոդական ցուցումներ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման» ուղեցույցի)՝ ՀԶԾ-ն պետք է ներառի իրագործելի և չափելի նպատակներ, իսկ դրանց իրագործման նպատակով պայմանավորված՝ կնախապատրաստվեն ծրագրեր: Ըստ նույն ուղեցույցի՝ «Ծրագրերի մշակումը պետք է ընթանա մի քանի փուլով՝ ներառելով ուղիղ և անուղղակի ժողովրդավարական մեթոդներ, մասնավորապես՝ նախքան ծրագիր մշակելը պետք է ստեղծվեն աշխատանքային խմբեր՝ ներառելով ոչ միայն ավագանու անդամներին կամ համայնքապետարանի աշխատողներին, այլ նաև համայնքի բնակչության շահագրգիռ կողմերին, ծրագրերի նախնական տարբերակները հանրային լսումների միջոցով պետք է ներկայացվեն համայնքի բնակչությանը և քննարկումներ ծավալվեն այն ավելի ներկայացուցչական դարձնելու համար[3]:

---

[1] *ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին*, 2002

http://www.irtek.am/views/act.aspx?aid=150060

[2] Նույն տեղում:

[3] ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, *Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդական ցուցումներ*,

http://www.mtad.am/hy/methodological-guides/

Համաձայն ՀՀ ՏԻՄ մասին օրենքի Հոդված 84-ի՝ «Համայնքի ղեկավարը, նախքան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 27.1-ով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տեղեկատվություն է տրամադրում համայնքի ավագանուն»:
Մասնակցելով հանրային բաց լսումներին՝ բնակիչներն անձամբ են մասնակցում իրենց համայնքի խնդիրների լուծմանը, խնդիրների լուծման հետ կապված թերությունների շտկմանը, որոշումների կայացմանը և իրենց մասնակցությամբ խնդիրների լուծմամբ ստացած օգուտներն ավելի արդյունավետ կլինեն, որն էլ հենց համայնքի զարգացման հիմքերից է հանդիսանում:

Սակայն հարկ է նշել, որ այս ցուցումները միշտ չէ, որ բավարարվում են մասնակի և/կամ ամբողջությամբ, ավելին, երբեմն ծրագրերը չեն արտացոլում հանրության իրական կարիքներն ու ցանկությունները:

Հաշվի առնելով այս խնդիրները՝ սույն հետազոտության նպատակն է վերհանել Եղեգիս համայնքի բնակիչների կարծիքը՝ կապված զարգացման ծրագրերի հանրային լսումներին իրենց մասնակցության, համայնքում կատարված և կատարվող ծրագրերի շրջանակներում իրենց պահանջների, հիմնավորված պնդումների վերաբերյալ, ինչպես նաև վերհանել իրականացված ծրագրերից ստացած օգուտները կին տղամարդ հավասարության սկզբունքով՝ մշակելով առաջարկությունների փաթեթ, որը հետագայում կներառվի ՀԶԾ և Տարեկան աշխատանքային պլանի (այսուհետ՝ ՏԱՊ) և այլ զարգացման ծրագրերի իրականացման հանրային լսումներին բնակիչների մասնակցությունն ապահովելու միջոցառման մեջ:

Հետազոտության խնդիրներն են.

1) պարզել Եղեգիս համայքնի ՀԶԾ-ն և դրանում արծարծված խնդիրներն ու ենթածրագրերը,
2) պարզել ՀԶԾ-ի և դրանում արծարծված խնդիրների չափելիությունն ու իրատեսականությունը,
3) պարզել համայնքի բնակիչների՝ ՏԻՄ գործունեության մեջ իրենց դերակատարման վերաբերյալ ընկալումները,
4) դուրս բերել համայնքի խնդիրների ու կարիքների լուծման գործընթացում (նաև կանանց) հիմնավորումները,
5) բացահայտել համայնքում իրականացված զարգացման ծրագրերի արդյունքից առանձին բնակավայրերում կանանց և տղամարդկանց հավասար օգտվելու հնարավորությունները,
6) հանդես գալ առաջարկներով, որոնք կօգտագործվեն համայնքի զարգացման ծրագրերի, ինչպես նաև ՏԱՊ-ի կազմման ընթացքում հանրային լսումներին համայնքի բնակիչներին՝ հատկապես կանանց ներգրավելու հետ գործողություններում:

Մեթոդաբանություն

Տվյալ հետազոտության խնդիրները լուծելու նպատակով կիրառվել են քանակական և որակական հետազոտության մեթոդները (նկարագրական ու բացատրական հետազոտություն):

1) Ստանդարտացված հարցազրույց

Հարցաթերթերում ներառվել են քանակական և որակական տվյալներ դուրս բերող հարցեր, ինչպիսիք են՝ բաց, փակ ու կիսափակ, տարբերակներ պարունակող հարցեր: Քննվել են նաև հասարակական և համայնքային երևույթներ, օգտագործվել են նոմինալ և Լիկերտի կարգային սանդղակային տիպեր: Հարցազրույցներն անց են կացվել անհատական՝ դեմ առ դեմ հարցումների միջոցով:

Հետազոտությանը մասնակցել է համայնքի 370 բնակիչ (6,0%-ը): Հարցմանը մասնակցել են տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչներ և սեռեր (38,6%-ը՝ արական և 61,4%-ը՝ իգական սեռ), մասնագիտություններ, կրթություններ ու նախասիրություններ, համայնքի բոլոր բնակավայրերից, ինչպես նաև տարբեր սոցիալ–տնտեսական կարգավիճակներ ունեցող մարդիկ:

2) Փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Տվյալների վերլուծություն

Եղեգիս համայնքը կազմավորվել է 2017 թվականին տեղի ունեցած փոփոխությունների՝ մասնավորապես «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում: Այն խոշորացված համայնք է, որն իր մեջ ներառել է 16 բնակավայր՝ Վարդահովիտ, Հերմոն, Գողթանիկ, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ, Շատին, Հորս, Սալլի, Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Սևաժայռ, Կալասեր, Գետիկավան և Արատես: Համաձայն Վայոց ձորի մարզպետարանի կայքի տվյալների՝ այս համայնքն ունի 6203 բնակիչ: Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է, սակայն վերջիններս ամբողջությամբ չեն արդարացնում բնակչության սպասումները և հիմք են ծառայում միգրացիայի աճին ու արտագաղթին (ըստ պաշտոնական վիճակագրության՝ հիմնական զբաղմունքը մեղվապահությունն է, խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծումն ու վարելահողերի մշակումը):

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատվել է 2018 թվականի մարտի 19-ին և ուժի մեջ է մինչև 2022 թվականը: Ըստ այս ծրագրի՝ համայնքի տեսլականն է «ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչները կունենան զբաղվածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում»: Հարկ է նշել, որ ծրագրում նշված չէ, թե արդյոք համայնքի բնակիչներն ընդհանրապես մասնակցել են համայնքի զարգացման ծրագրի մշակմանը կամ որևէ այլ տեսակի քննարկման: Չնայած փաստաթղթում նաև առկա է բոլոր բնակավայրերի SWOT վերլուծություն (ուժեղ, թույլ կողմերի վերլուծություն)՝ որևէ նշում չկա այն մասին, թե ինչ պայմաններում և բնակչության ինչպիսի ներգրավվածությամբ է կատարվել վերոնշյալը:

Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ հարցումներին մասնակցած բնակիչների մի ստվար մասը (47,8%, 117 անձ) մեր հարցին ի պատասխան, թե երբևէ մասնակցել են համայնքի զարգացման ծրագրերի և/կամ տարեկան պլանների քննարկմանը, պատասխանել են՝ «ոչ, երբեք, այնինչ հարցվողների 30%-ը (111 անձ) նշել է, որ երբեմն մասնակցել է և միայն 12,7%-ն է (47 անձ) ասել, որ մշտապես մասնակցում է քննարկումներին (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Դուք մասնակցու՞մ եք Ձեր համայնքի զարգացման ծրագրերի և/կամ տարեկան պլանների քննարկմանը:



Սակայն ի հակադրություն մասնակցության ցածր ցուցանիշին՝ համայնքի բնակիչների (հարցվողների) մի մասը կարծում է, որ իր ձայնը հիմնականում կարևոր է համայնքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս (33%) (122 անձ): Պատասխանողների մյուս մասը՝ 25,7%-ը (95 անձ), կարծում է, որ իր ձայնը շատ կարևոր է, իսկ ահա 20,3%-ը (75 անձ)՝ բարձրացված հարցին ի

պատասխան ընտրել է «չգիտեմ» տարբերակը: Հարցին բացասական պատասխան՝ «հիմնականում կարևոր չէ և/կամ «ընդհանրապես կարևոր չէ պատասխանները տրվել են հարցվողների համապատասխանաբար՝ 15,4%-ի (57 անձ) և 5,6%-ի (21 անձ) կողմից (տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Ձեր կարծիքով, որքանո՞վ է կարևոր Ձեր ձայնը համայնքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս:



Մասնակցության ցածր ցուցանիշի և բնակիչների շրջանում տեղեկատվության պակասի ու գուցե նաև հետաքրքրվածության ցածր մակարդակի մասին է վկայում համայնքի ՀՁԾ-ի վերաբերյալ տեղեկացվածության հարցը, ըստ այդմ՝ հարցվողների ճնշող մեծամասնությունը՝ 55,4%-ը (205 անձ), պատասխանել է, որ ծրագրից ընդհանրապես տեղյակ չէ, մի մասը՝ 35,1%-ը (130 անձ), նշել է, որ տեղեկացված է մասամբ և միայն 9,5%-ն (35 անձ) է ընդգծել լավատեղյակության փաստը (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Որքանո՞վ եք տեղեկացված Ձեր համայնքի 5-ամյա զարգացման ծրագրին:



Պատկերը գրեթե նույնն է նաև համայնքի ՏԱՊ-ի մասին հարցի դեպքում, որն ավելի ահագնացող է նախորդ հարցի համեմատ: Ընդ որում, հարցվողների կրկին ճնշող մեծամասնությունը՝ 53,4%-ը (198 անձ), պատասխանել է, որ տեղեկացված չի, 36,8%-ը (136 անձ) մասամբ է տեղեկացված և միայն 9,7%-ն է (36 անձ) պատասխանել, որ լավատեղյակ է:

Գծապատկեր 4. Որքանո՞վ եք տեղեկացված Ձեր համայնքի տարեկան աշխատանքային պլաններից։



Վերադառնալով համայնքի զարգացման հնգամյա ծրագրին՝ ՏԱՊ-ին՝ հարցաթերթում առանձնացվել էին հարցեր, որոնք հիմնականում առնչվում էին ՀՁԾ-ին, դրա մեջ առկա ենթածրագրերին ու տեսանելի արդյունքներին։ Նախքան արդյունքների մասին խոսելը, բնակիչներին հարց է տրվել, թե որտեղից են տեղեկացել/տեղեկանում ՀՁԾ-ի ու ՏԱՊ-ի մասին, ինչին պատասխանել են՝

1) համագյուղացիներից (29,2%,108 անձ),
2) համայնքապետարանի աշխատողից (29,2%, 97 անձ),
3) համայնքապետարանի կայքից (24,6%, 91 անձ),
4) համայնքապետարանից՝ տպագիր (14,6%, 54 անձ)։

Մենք բարձր ենք գնահատում այն հանգամանքը, որ հարցվողների մեծամասնությունը նշել է համագյուղացիներից տարբերակը, քանի որ եթե տեղեկացված է բնակչությունը, և փաստացի ինֆորմացիայի փոխանակում է տեղի ունենում, ապա որոշ չափով հաջողություն է գրանցվել։

Իսկ թե որ հարթակներից ամենաշատը կցանկանային տեղեկատվություն ստանալ, համայնքի բնակիչների մեծ մասը նշել է, որ ամենահարմար տարբերակներն են՝ համայնքապետարանի կայքից (33%, 122 անձ), համայնքապետարանից՝ տպագիր նյութերի տարբերակով (26,5%, 98 անձ), համայնքապետարանի աշխատողներից (28,9%, 107 անձ) ու սոցիալական կայքերից (28,9%, 107 անձ)։

Նախքան հարցաթերթ կազմելը համայնքապետարանից տեղեկացել էի վերջին 3 տարիների և 2021 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից իրականացվող և իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի մասին և դրանց վերաբերյալ կազմել էի ենթահարցեր՝ դրանք ներկայացնելով առանձին-առանձին՝ պարզելու համար, թե հարցվողներն ինչքանով են տեղյակ այդ ծրագրերից և նրանց ինչքան մասն է մասնակցել այդ ծրագրերի հանրային քննարկումներին։ Պատկերը, որն ստացանք հարցումների ավարտին, բոլորովին դրական ու հուսադրող չէր։ Հարցվողների մեծ մասն անտեղյակ են այն գործերից, որոնք արվել կամ արվում են համայնքում, որի պատճառներից մեկը հանրային քննարկումներին չմասնակցելն է. այստեղ փաստացի երևում է նաև ՏԻՄ-երի իրազեկման ինստիտուտի թույլ լինելը։ Այս անտեղյակության ֆոնի վրա է, որ բնակչության մեջ ձևավորվում է այն ալիքը, որ ՏԻՄ-երը ոչինչ չեն անում համայնքի համար, անգործության են մատնվել (տե՛ս Գծապատկեր 5)։

Գծապատկեր 5. Մասնակցե՞լ եք վերջին երեք տարիների և 2021 թվականի ընթացքում ներկայացված սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկումներին:



Հարցին, թե որոնք են հանրային քննարկումներին չմասնակցելու պատճառները, հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ (տե՛ս Գծապատկեր 6)։

Գծապատկեր 6. Որո՞նք են սովորաբար հանրային քննարկումներին չմասնակցելու պատճառները:



Արձանագրված արդյունքներից հասկանում ենք, որ հայկական խառնվածքում առկա ավանդական մտածելակերպը, որ կինը պետք է լինի խոհանոցում և չի կարող լինել քաղաքական գործընթացներում, այնքան զբաղված է առօրյա հոգսերով, որ ժամանակ չի ունենում մասնակցելու ՏԻՄ-ի կայացրած որևէ որոշման։ Եվ մի շատ կարևոր պատճառ, ասել է թե, հացի խնդիր լուծելու հարցը, որ ամեն մեկի մոտ բավականին կարևոր է, քան մնացած հարցերը։

Վերադառնալով այն հարցերին, թե մարդիկ՝ մասնավորապես կանայք, ինչու չեն մասնակցում վերջին երեք տարիների և 2021 թվականի ընթացքում ներկայացված սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկումներին, հարցվողները պատասխանել են տարաբնույթ, սակայն պատասխանների մեջ գերակշռողը ժամանակի սղությունն է, որն այնքան էլ ընդունելի տարբերակ չէ, քանի որ ինձ հետ ունեցած դեմ առ դեմ հանդիպումներից կարծիք է ձևավորվել, որ ժամանակի սղության պատասխանի տակ ավելի շատ թաքցվում է սեփական անտարբերությունն իրենց համայնքում կատարվող գործերի հանդեպ։

Հաջորդիվ պատասխանել են՝ տեղեկացվածության պակասը, որն իրավամբ առկա է համայնքում։ Մարդկանց մոտ առկա է իրավագիտակցության ցածր մակարդակ՝ համայնքային գործունեության, իրենց իրավունքների և պարտականությունների դրսևորման, համայնքային կայքերից օգտվելու խնդիրների հետ կապված։ Համայնքն իր հերթին նույնպես թերանում է զարգացման ծրագրերի և դրանց հետ կապված հանրային քննարկումների մասին ճիշտ լուսաբանում կազմակերպելու

գործում, քանի որ միայն պաշտոնական կայքով հրապարակելը դեռ չի նշանակում ամբողջովին տեղեկացնել:

Ինչ վերաբերվում է ավանդակության պատճառաբանությանը, ապա դա ավելի շատ բխում է անվստահությունից, քանի որ տղամարդիկ և կանայք վստահ չեն, որ կինը, ապահովելով իր մասնակցությունը, կարող է ազդեցություն ունենալ, վերջիններս վստահ չեն հասարակական կարծիքի վրա, չեն վստահում իշխանությունների հետ համագործակցելու արդյունքին, դրա համար ել գտնում են, որ կանայք ավելի շատ պետք է զբաղվեն տնային գործերով:

Բայց այստեղ հաջորդ հարցով առաջանում է մի առանցքային հակասություն, քանի որ հարցվողները, որոնք չեն մասնակցում հանրային քննարկումներին, տեղեկացված չեն համայնքում տարբեր ծրագրերով կատարված աշխատանքներից, միևնույնն է կարծում են, որ կարևորում են կանանց համայնքի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկումներին կանանց մասնակցությունը (տե՛ս Գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Որքանո՞վ եք կարևորում համայնքի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկումներին կանանց մասնակցությունը.
34,9% (129 անձ), 34,3% (127 անձ), 14,6%- (54 անձ):



Այստեղից գալիս ենք այն համոզմանը, որ եթե շատ են կարևորում և հիմնականում կարևորում են կանանց մասնակցությունը հանրային քննարկումներին, արդեն քայլեր է արվում հասարակության կողմից կարծրատիպերի կոտրմանը, իսկ իշխանությունները և հասարակական կառույցներն իրենց հերթին պետք է մշակեն քաղաքականություններ, որոնք ուղղված կլինեն կանանց ներգրավվածության ապահովմանը:

Իսկ համայնքի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկումներ անցկացնելու համար որպես հարմար տարբերակ՝ հարցվողներն առավելապես ընտրել են հանրային օֆլայն լսումների և հանրային օֆլայն քննարկումների ձևը, իսկ որոշ մասը նախընտրել է օնլայն տարբերակը (տե՛ս Գծապատկեր 8)։

Գծապատկեր 8. Ի՞նչ ֆորմատով/ձևաչափով կցանկանայիք անցկացվեին համայնքի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հանրային քննարկումները (նշեք հարցվողի կողմից հնչեցված բոլոր պատասխանները։

Ամփոփում. վերհանված խնդիրներ

Համայնքի բնակիչների՝ տարբեր ծրագրերի վերաբերյալ քննարկումներին մասնակցելու հնարավորության սակավություն։

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ համայնքի բնակիչները ոչ միայն տեղեկացված չեն ՀԶԾ-ից, նրա բովանդակությունից, ՏԱՊ-ից, իրականացված ծրագրերից, այլև նրանք հնարավորություն չեն ունեցել մասնակցել վերոնշյալի վերաբերյալ որևէ հանրային քննարկման։

1) Երիտասարդների շրջանում համայնքային կյանքին մասնակցելու հետաքրքրության և ցանկության պակաս։

Հարցաթերթերի վերլուծության արդյունքում ուշադրություն դարձնելով հարցվողների սեռերին և հարցերի պատասխաններին՝ պարզ է դառնում, որ կանանց շրջանում առկա է ոչ միայն ՏԻՄ գործառույթների, համայնքում կատարվող ծրագրերի ու կարիքների վերաբերյալ տեղեկատվության պակաս, այլև որոշ դեպքերում կանայք իրենք ցանկություն չունեն և հետաքրքրված չեն մասնակցություն ունենալ համայնքային կյանքում՝ չնայած այն բանին, որ որոշումների կայացման հարցում շատ կարևորում են իրենց ձայնը։ Սրա մասին են վկայում հարցազրույցների ընթացքում բաց հարցերին տրված պատասխանները։

2) Տեղեկատվությունը, այդ թվում՝ ՀԶԾ-ի, ՏԱՊ-ի, հասարակության լայն շերտերին հասանելի դարձնելու խնդիր։

Հարցազրույցների ընթացքում, ինչպես նաև հարցաթերթիկներում տրված բաց և փակ հարցերի պատասխաններից պարզ է դառնում, որ հասարակության մոտ տեղեկացվածության և տեղեկույթին տիրապետելու խնդիր կա։ Ավելին, հստակ է, որ հանրության շրջանում նաև ՏԻՄ ենթակառուցվածքներն ու դրանց գործառույթները հասկանալու և այդ ինֆորմացիային տիրապետելու խնդիր կա։ Տարբեր հարթակներ՝ ինչպես առցանց, այնպես էլ օֆլայն, բավարար կերպով օգտագործված չեն։

3) Համայնքապետարանի աշխատակիցների՝ իրազեկման առումով իրենց գործառույթների՝ բավարար կերպով չկատարելու խնդիր։

Համայնքի բնակիչները համայնքապետարանի աշխատակիցների և վերջիններիս ծավալած աշխատանքի վերաբերյալ ունեն մտահոգություններ և որ ավելի կարևոր է, համայնքի բնակիչների (հարցվողների) գերակշիռ մասը ոչ միայն հանդիպում, այլև որևէ խնդրի վերաբերյալ քննարկում չի ունեցել նրանց հետ։

Առաջարկություններ

Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ Եղեգիս համայնքի բնակիչների հետ անցկացված հարցազրույցները, դիտարկումները, հիմնվելով վերը նշյալ խնդիրների վրա՝ մշակվել են հետևյալ առաջարկները՝ համայնքի կյանքին բնակիչների լայն զանգվածների ներգրավվածությունը բարելավելու, նրանց մասնակցությունը խթանելու և հանրության իրավեկվածությունը ՏԻՄ-երի և նրա ծավալած գործունեության վերաբերյալ բարձրացնելու համար։

Հաշվի առնելով բնակչության շրջանում կատարված ուսումնասիրությունը և վերլուծելով տարբեր քննարկումների մասնակցելու վերաբերյալ նրանց կարծիքը՝ առաջարկվում է տարբեր ձևաչափի քննարկումներ անցկացնել համայնքի տարբեր բնակավայրերում։ Միշտ չէ, որ բնակիչը տեղեկատվություն ստանալու համար պետք է գա համայնքապետարան, ամսվա և կիսամյակի կտրվածքով տարբեր բնակավայրերում կարող են կազմակերպվել հանդիպումներ ՏԻՄ ներկայացուցիչների՝ համայնքապետի, ավագանու ու խորհրդի անդամների մասնակցությամբ։ Սա կնպաստի համայնք-ՏԻՄ կապին՝ նպաստելով բնակչության ձայնի լսելի լինելուն։

Հիմք ընդունելով համայնքի բնակիչների առաջ քաշած հաղորդակցության և տեղեկություն ստանալու արդյունավետ մեթոդներն ու հարթակները՝ առաջարկում ենք բարելավել և զարգացնել հաղորդակցության հետևյալ մեթոդները.

1. *Համայնքապետարանի կողմից տպագիր եղանակով տարածվող հայտարարություններ.* հայտարարությունների լավ տարածումը կարող է հիմք ծառայել, որ համայնքի բնակիչների տարիքային ավելի մեծ խումբ ներկա գտնվի համայնքային ժողովներին ու նիստներին։ Առաջարկվում է տեսանելի վայրերում տեղադրել հայտարարության տախտակներ և նախապես (1 շաբաթ առաջ՝ ՏԻՄ մասին օրենք, Հոդված 14, կետ 4[4]) տեղեկացնել հանրությանը գալիք նիստի կամ ժողովի վերաբերյալ։
2. *Տպագիր մամուլի միջոցով տարածվող հայտարարությունների մշակում.* գաղտնիք չէ, որ հանրության մի ստվար զանգված դեռևս օգտվում է տպագիր մամուլից և այն հանդիսանում է այս օղակի իրազեկման գլխավոր աղբյուր։ Առաջարկվում է համայնքի բյուջեից կամ դոնոր կազմակերպության աջակցությամբ ստեղծել Եղեգիս համայնքի թերթ, որտեղ կտեղադրվեն ոչ միայն տարբեր նիստերի վերաբերյալ հայտարարություններ, այլև ՀԶԾ-ի, բյուջեի նախագծի, ՏԱՊ-ի և կատարողական հանրամատչելի նկարագիրներ և բացատրություններ։ Կարևոր է նշել, որ սա կլրացնի նաև հանրության շրջանում իրազեկվածության պակասն ու կբարձրացնի ՏԻՄ-երի ու նրանց գործունեության վերաբերյալ հանրության գիակցությունը։
3. *Որևէ լրատվամիջոցով հանրային լսման մասին իրազեկելը.* սա ևս արդիական է, քանի որ հիմա մենք ապրում ենք այնպիսի դարաշրջանում, որ եթե լրատվամիջոցով իրադարձությունը լուսաբանվում է, ապա դա ավելի կարևոր է դառնում հասարակության համար։
4. *Համայնքի կայքի և սոցիալական մեդիայի որակյալ և արդյունավետ օգտագործում.* արդիականացնել, ակտիվացնել ու համայնքի բնակիչների համար գրավիչ ու հետաքրքիր դարձնել համայնքին պատկանող սոցիալական մեդիայում առկա տարբեր էջերը։ Երիտասարդների աջակցությամբ վարել ֆեսբուքյան, ինստագրամյան էջեր, որտեղ

---

[4] *ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին*, 2002

http://www.irtek.am/views/act.aspx?aid=150060

նախապես կտեղադրվեն նիստերի վերաբերյալ հայտարարություններ, կմշակվեն ու կտարածվեն ինֆորմատիվ և ուսուցողական նյութեր՝ ՏԻՄ-երի, նրանց գործառույթների, գործունեության վերաբերյալ։

4.1. Փոքրիկ թռուցիկների միջոցով տուն առ տուն հրավերը ևս մի միջոց է մարդկանց մասնակցությունն ապահովելը հանրային քննարկումներին, քանի որ ՏԻՄ մարմինների կողմից ստանալով հրավեր՝ մասնակցելու իրենց որոշումների կայացմանը, մարդիկ իրենց անձի կարևորությունն են զգում և ներքուստ պարտավորվածություն են ստանձնում արձագանքելու այդ հրավերին։

4.2. Հաշվի առնելով բնակչության շրջանում նշված ավագանու անդամների, նրանց հետ ունեցած հանդիպումների և խնդիրների քննարկման պակասը՝ առաջարկում ենք ավագանու անդամներին ու համայնքապետին ամսվա կտրվածքով այցեր կատարել տարբեր բնակավայրեր, խոսել բնակիչների հետ, ունենալ դեմ առ դեմ հանդիպումներ, լսել նրանց խնդիրները, բացատրել այդ խնդիրների քննարկումների հանրային լսումներին մասնակցելու կարևորությունը, երբեմն այցելել քաղաքացիների տներ՝ ստեղծելով վստահության մթնոլորտ։ Իր հերթին, այս քայլով ՏԻՄ-երը կնպաստեն բնակիչների՝ համայնքային կյանքով հետաքրքրված լինելուն (ինչը հետազոտության արդյունքում խնդիրներից մեկն էր. բնակիչները հետաքրքրված չէին մասնակցել համայնքային կյանքին, որը հիմնականում առաջ էր գալիս իրազեկվածության պակասի և հաղորդակցության պակասի պատճառով)։

5. *Կարևորել և խթանել երիտասարդների մասնակցությունը և նրանց դերը համայնքային կյանքում։* Գիտակցելով, որ երիտասարդները համայնքի շարժիչ ուժն են և ապագայի ներուժը, պետք է նրանց համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կխթանեն ոչ միայն համայնքային կյանքում նրանց ներգրավվածությունը, այլև որոշումների կայացման, ՀԶԾ կազմելու, առաջարկների մշակման նկատմամբ հետաքրքրվածությունը։
Դրա լուծման ամենաարդիական տարբերակը պարտադիր երկարամյա քաղաքական դպրոցների հիմնումն է մարզերում, որի հիմնադրմամբ անձամբ պետք է զբաղվի մի քանի նախարարություն։

Երկարամյա պարտադիր քաղաքական դպրոցների հիմնումը կարևոր է այնքանով, որ հետաքրքրվածությունը, իրավագիտակցությունը, վստահությունը ՏԻՄ ոլորտի և ընդհանրապես քաղաքական պրոցեսների նկատմամբ, պետք է ունենա գիտական հիմք, անհրաժեշտ է տարիներով սերմանել դա երիտասարդների մեջ, որպեսզի մասնակցության ցանկություն ու հետաքրքրվածություն առաջանա, այլ ոչ թե արհեստական մատուցենք դրանք։

6. *Որոշումների կայացման հանրային քննարկումներում կանանց քվոտայի նախատեսում։* Քանի որ մեր հետազոտությունը ցույց է տվել կանանց պասիվ մասնակցությունը և քանի որ մենք Ազգային ժողովում կանանց մասնակցության մեծացման նախադեպ ունենք՝ քվոտայով պայմանավորված, ուստի առաջարկվում է օրենսդրական փոփոխություն՝ հանրային քննարկումներում ունենալ կանանց որոշակի թվի պարտադիր մասնակցություն, այլապես հանրային քննարկումն օրենքի տեսանկյունից դիտարկել չկայացած։

Աբստրակտ

Սույն հետազոտությունն անցկացվել է Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում: Եղեգիս համայնքը կազմավորվել է 2017 թվականին տեղի ունեցած փոփոխությունների՝ մասնավորապես «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում: Այն բազմաբնակավայր համայնք է, որն իր մեջ ներառել է 16 բնակավայր՝ Վարդահովիտ, Հերմոն, Գողթանիկ, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ, Շատին, Հորս, Սալլի, Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Սևաժայռ, Կալասեր, Գետիկավան և Արատես:

Համաձայն Վայոց ձորի մարզպետարանի կայքի տվյալների՝ այս համայնքն ունի 6203 բնակիչ: Համայնքի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է լինում մշակել ծրագիր, որը հստակ կարտացոլի տվյալ համայնքի զարգացման տեսլականը, կսահմանի նպատակներ և իրատեսական խնդիրներ՝ առանձնացնելով գործնական քայլեր դրանց հասնելու համար: ՀՀ համայնքներում կառավարման արդյունավետության ապահովման համար հինգ տարի պարբերականությամբ կազմվում են համայնքի զարգացման ծրագրեր (այսուհետ՝ ՀԶԾ):

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը:

Հաշվի առնելով այս խնդիրները՝ սույն հետազոտության նպատակն է վերհանել Եղեգիս համայնքի բնակիչների կարծիքը՝ կապված զարգացման ծրագրերի հանրային լսումներին իրենց մասնակցության, համայնքում կատարված և կատարվող ծրագրերի շրջանակներում իրենց պահանջների, հիմնավորված պնդումների վերաբերյալ, ինչպես նաև վերհանել իրականացված ծրագրերից ստացած օգուտները կին-տղամարդ հավասարության սկզբունքով՝ մշակելով առաջարկությունների փաթեթ, որը հետագայում կներառվի ՀԶԾ և Տարեկան աշխատանքային պլանի (այսուհետ՝ ՏԱՊ) և այլ զարգացման ծրագրերի իրականացման հանրային լսումներին բնակիչների մասնակցությունն ապահովելու միջոցառման մեջ:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ համայնքի բնակիչները ոչ միայն տեղեկացված չեն ՀԶԾ-ից, նրա բովանդակությունից, ՏԱՊ-ից, իրականացված ծրագրերից, այլև նրանք հնարավորություն չեն ունեցել մասնակցել վերոնշյալի վերաբերյալ որևէ հանրային քննարկման: Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ Եղեգիս համայնքի բնակիչների հետ անցկացված հարցազրույցները, դիտարկումները, հիմնվելով վերը նշված խնդիրների վրա՝ մշակվել են հետևյալ առաջարկները՝ համայնքի կյանքին բնակիչների լայն զանգվածների ներգրավվածությունը բարելավելու, նրանց մասնակցությունը խթանելու և հանրության իրավեկվածությունը ՏԻՄ-երի և նրա ծավալած գործունեության վերաբերյալ բարձրացնելու համար:

Հաշվի առնելով բնակչության շրջանում կատարված ուսումնասիրությունը և վերլուծելով տարբեր քննարկումների մասնակցելու վերաբերյալ նրանց կարծիքը՝ առաջարկվում է տարբեր ձևաչափի քննարկումներ անցկացնել համայնքի տարբեր բնակավայրերում: Միշտ չէ, որ բնակիչը տեղեկատվություն ստանալու համար պետք է գա համայնքապետարան, ամսվա և կիսամյակի կտրվածքով տարբեր բնակավայրերում կարող են կազմակերպվել հանդիպումներ ՏԻՄ ներկայացուցիչների՝ համայնքապետի, ավագանու ու խորհրդի անդամների մասնակցությամբ: Սա կնպաստի համայնք-ՏԻՄ կապին՝ նպաստելով բնակչության ձայնի լսելի լինելուն:

Հիմք ընդունելով համայնքի բնակիչների առաջ քաշած հաղորդակցության և տեղեկություն ստանալու արդյունավետ մեթոդներն ու հարթակները՝ առաջարկում ենք բարելավել և զարգացնել հաղորդակցության մեթոդները՝ *համայնքապետարանի կողմից տպագիր եղանակով տարածվող հայտարարություններ, համայնքապետարանի կողմից տպագիր եղանակով տարածվող հայտարարություններ, տպագիր մամուլի միջոցով տարածվող հայտարարությունների մշակում, որևէ լրատվամիջոցով հանրային լսման մասին իրազեկելը, համայնքի կայքի և սոցիալական մեդիայի որակյալ և արդյունավետ օգտագործում, կարևորել և խթանել երիտասարդների մասնակցությունը և նրանց դերը համայնքային կյանքում, որոշումների կայացման հանրային քննարկումներում կանանց քվոտայի նախատեսում:* Քանի որ մեր հետազոտությունը ցույց է տվել կանանց պասիվ մասնակցությունը և քանի որ մենք Ազգային ժողովում կանանց մասնակցության մեծացման նախադեպ ունենք՝ քվոտայով պայմանավորված, ուստի առաջարկվում է օրենսդրական փոփոխություն՝ հանրային քննարկումներում ունենալ կանանց որոշակի թվի պարտադիր մասնակցություն, այլապես հանրային քննարկումն օրենքի տեսանկյունից դիտարկել չկայացած:

Բանալի բառեր. Եղեգիս, կառավարման արդյունավետություն, համայնքի զարգացման ծրագրեր, հանրային բաց լսումներ, համայնք, տեղեկացվածության պակաս

Abstract

This research was conducted in Yeghegis community of Vayots Dzor region. Yeghegis community was formed as a result of the changes that took place in 2017, in particular, the changes made in the RA law "On RA administrative-territorial division". It is a multi-dwelling community, which included 16 settlements: Vardahovit, Hermon, Goghtanik, Yeghegis, Artabuynk, Horbategh, Shatin, Hors, Sally, Taratumb, Karaglukh, Aghnjadzor, Sevazhayr, Kalaser, Getikavan and Arates.

According to the website of Vayots Dzor regional administration, this community has 6203 inhabitants. For effective community management, it is necessary to develop a program that will clearly reflect the vision of the community, will set goals and realistic problems, highlighting practical steps to achieve them. Community development programs (hereinafter referred to as CDP) are developed periodically for five years to ensure the effectiveness of governance in the communities of the Republic of Armenia.

The five-year community development plan is a document expressing the set of steps to be taken in terms of targeted development as a result of analysis of the socio-economic situation of the community, identification of existing problems, evaluation of financial, economic, natural and human resources, which envisages effective solution of community problems.

Taking into account these issues, the aim of this study is to find out the opinion of Yeghegis community residents regarding their participation in public hearings on development programs, their demands and substantiated claims within the implemented programs in the community, as well as to bring out the benefits of the implemented programs designing a package of offers that will later be included in the Community development programs, Annual Work Plan (hereinafter referred to as AWP) and in the hearings of other implemented development programs to ensure the participation of residents in those public.

As a result of the research, it became clear that the residents of the community were not only unaware of the CDP, its content, AWP, implemented programs, but also they did not have the opportunity to participate in any public discussion on the above. Based on the above mentioned issues, the following recommendations have been developed to improve the involvement of large mass of the population in

the life of the community, to promote their participation, to increase the public awareness of the local self-government body and its activities.

Taking into account the research conducted among the population, analyzing their opinion on participation in different discussions, it is suggested to hold different size discussions in various settlements of the community. The resident does not always have to come to the community hall to get information, meetings can be organized in different settlements with the participation of local government representatives, the mayor, the council and the council members. This will contribute to the community-local government connection, contributing to the audibility of the population's voice.

Based on the effective methods and platforms of communication that provide information to the residents of the community, we suggest to improve and develop communication methods: *announcements issued by the Municipality in printed form, distributed announcements by the Municipality, elaboration of printed announcements, informing the public about the media, high-quality, effective use of the community social media pages, enable and promote youth participation and their role in the community life, envisage a quota for women in public decision-making discussions.* As our research has shown the passive participation of women and as we have a precedent for increasing the participation of women in the National Assembly due to the quota, it is proposed a legislative change to have a mandatory number of women in public debates, otherwise the public debate will be considered unsuccessful.

Keywords: Yeghegis, management efficiency, community development programs, public hearings, community, lack of awareness